30 հուլիսի 2009 թվականի N 871 - Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N 658-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» բաց բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» N 494-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 23-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը պետական աջակցության 2009 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 658-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) որոշման N 1 հավելվածում՝

ա. II գլխի 2-րդ կետի 6-րդ ենթակետը, IV գլխի 6-րդ, 7-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

բ. IV գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ կետով.

*«8. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» բաց բաժնետիրական ընկերության ֆինանսավորումը*

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» բաց բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» N 494-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծվել է 100 տոկոս պետական բաժնեմաս ունեցող ընկերություն, որի հիմնական խնդիրներն են Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թվականի մարտի 15-ի ՆԿ-53-Ա կարգադրությամբ 2010 թվականի հունվարի 1-ից նույնականացման քարտերի ներդրման նախագծի իրականացումը, ինչպես նաև էլեկտրոնային ծառայությունների մատակարարումը: Բացի ծրագրերի ընթացիկ կառավարումից, ընկերությունը համատեղ աշխատանքներ է տանելու մի շարք շահագրգիռ կողմերի հետ՝ փոխհամատեղելիության և անվտանգության ստանդարտների քննարկման նպատակով: Ընկերությունն արդեն իսկ պետականորեն հավատարմագրված էլեկտրոնային թվային ստորագրության հավատարմագրման կենտրոնի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական մարմիններին, մասնավոր հատվածին և քաղաքացիներին տրամադրելու է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրեր: Ընկերությունը նաև ապահովելու է էլեկտրոնային ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ

ենթակառուցվածքների ձևավորումը՝ դրանով իսկ բարձրացնելով այդ ուղղությամբ իրականացվող ծրագրերի նպատակայնությունը և արդյունավետությունը։».

2) որոշման N 2 հավելվածում՝

ա. 2-րդ կետի 2.2-րդ, 2.4-րդ, 2.5-րդ ենթակետերը, 3-րդ կետի 3.8-րդ, 3.9-րդ ենթակետերը, 6-րդ և 7-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ կետով.

«

| | | | |
|---|---|---|---|
| 8. | «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» բաց բաժնետիրական ընկերության ֆինանսավորում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ԲԲԸ (համաձայնությամբ) | 2009 թ. երկրորդ կիսամյակ |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2009 թ.
Երևան